

Իսկ Թադէոս Միհրդատեանց իր մէկ գիրքին մէջ (ՏԵՍ Նկարագիր աղետից Երուսաղէմի, (էջ 60) կը գրէ՝ թէ «նոյնպէս եւ նապլուսի եկեղեցիներն ալ՝ որ շատ ժամանակէ ի վեր քայքայուած ու ամառի մնացած է, եւ որուն հրովարտականներն ալ (ինչպէս կը լսեմք) երեսի վրայ կեցած են, ու ժողովուրդը ցրուած եւ կամ յունազաւան եղած է»:



Լ Գ

ԹԱՐՈՐ ԼԵՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Քրիստոսի Այլակերպութիւնը կը պատմեն Մասթուսի (Ժէ. 1-3), Մարկոսի (Թ. 1-12) և Ղուկասու (Թ. 29-36) աւետարանները: Անոնք չեն յիշեր անունը լերան՝ ուր այլակերպեցաւ մեր Տէրը: Աւանդութիւնը և առաքելական դարու մօտ ապրող եկեղեցական մատենագիրները կը հասկցնեն թէ Փրկչին այլակերպած լեռը Թարորն էր: Առաջին դարու վերջերը կամ Բ. դարու ըսկիզբը խմբագրուած Եբրայեցոց կոչուած անվաւեր աւետարանին մէկ հատուածը կը պատմէ թէ՝ Յիսուս Ս. Հոգիէն առաջնորդուեցաւ «Թարոր լերան վրայ». սոյնին յաջորդ համարը կը պակսի. բայց, ըստ քննադատներու, պիտի պատմուէր թէ Յիսուս պիտի այլակերպէր հոն Մովսէսի և Եղիայի ներկայութեան: Որոգինէս (185-254) կ'ըսէ. «Թարորը Գալիլիոյ այն լեռն է՝ որուն վրայ Քրիստոս այլակերպեցաւ» (Մեկն. ԶԸ. Սաղմոսի, 13): Գ. էն Դ. դար խմբագրուած «Նեջումն Ս. Կուսին» գրուածը երկիցս կը պատմէ թէ Փրկչին Այլակերպութիւնը տեղի ունեցած է Թարոր լերան վրայ: Կիւրեղ Երուսաղէմացի «Կոչումն Ընծայութեան» գիրքին ժԲ. ճառին մէջ կ'ըսէ. «նոյին իսկ եին (Մովսէս և Եղիա), որ ի ժամանակին յայրակերպս յինեոյն եկին կացին ի յեթիևն Թարոր...»: Պրոկղ՝ Պատրիարք Կ. Պոլսի (* 447), Անդ-